ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 մարտի 2012թ. թիվ 122

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2011թ. սեպտեմբերի 30-ի «Երեխայի առողջության պետական հավաստագրի ներդրման գործընթացի մարզային մոնիտորինգի մասին» թիվ 1932-Ա և 2007թ. մայիսի 18-ի «Երեխաների հիվանդանոցային օգնության կազմակերպումը» ձեռնարկը հաստատելու մասին» թիվ 877-Ա հրամանները՝

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում երեխաների բուժօգնություն իրականացնող ծառայության մասնագիտական գործունեության ուսումնասիրման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

20-օրյա ժամկետում ավարտել ուսումնասիրությունները և ներկայացնել տեղեկանք:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. մարտի 26
ք.Վանաձոր